# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում **ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների որակի** տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/18** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **04.10.2023թ**-ին կնքված N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/18** գնման պայմանագրում 2025 թվականի հունվարի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N1 | ՀՀ կառավարության 27.12.2024թ. N 2060-Ն որոշումը |
| Փոփոխության նկարագրություն | N **ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/18** պայմանագրի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը լրացնել նոր վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6

## 04.10.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/18 գնման պայմանագրի

ք. Երևան 23.01.2025թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն՝ Ա. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.12.2024թ. N 2060-Ն որոշումը և **ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության** մատուցման համար Կողմերի միջև 04.10.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/18 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2025 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը բաղկացած են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ,<br>կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011047264<br>ՀՎՀՀ 02565827 | «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ<br>ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան<br>Ա. Մանուկյան 15<br>«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 1150002922490100<br>ՀՎՀՀ 09809552 |
| Գլխավոր քարտուղար՝<br>------------------------ Գ. Եղիազարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>------------------------ Ա. Առաքելյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
04.10.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-23/18 գնման պայմանագրի
23. 01 2025թ. կնքված N 6 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Մինչև 2024թ. վճարված գումար | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540/4 | ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն | 22 059 100 | - | 2 126 700 | 2 126 700 | 4 253 400 | 4 253 400 | 4 253 400 | 4 820 900 | 4 820 900 | 4 820 900 | 4 820 900 | 4 820 900 | 4 820 900 | 4 820 900 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047264
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

---------------- Գ. Եղիազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան
Ա. Մանուկյան 15
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150002922490100
ՀՎՀՀ 09809552

Տնօրեն՝

---------------- Ա. Առաքելյան
(ստորագրություն)

Կ.Տ.